**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-9/7-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **27 -ը մայիսի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ֆարմեգուս» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Գ. Արշակյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ «Կողմեր», հիմք ընդունելով **17.01.2020թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/7-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով Վաճառողի գրությունը համաձայն որի վերջինիս մոտ տեղի է ունեցել հարկման համակարգի փոփոխություն, որի արդյունքում Վաճառողը այժմ համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող, որոշեցին Պայմանագրի 3.1 կետում կատարել լրացում՝ ՀՀ դրամ բառից հետո ավելացնել «, ***ներառյալ ԱԱՀ-ն***» բառերը:

1.2 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.3 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***486,020 (չորս հարյուր ութսունվեց հազար քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ֆարմեգուս» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք. Երևան, Մամիկոնյանց 3/41 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1570051932950100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00108127 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Գ. ԱՐՇԱԿՅԱՆ |

Լ/ա Ա. Պետրոսյան
AM 0373336

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքների անվանումը | Չ/մ | Քանակը | Միավորի գինը (ՀՀ դրամ) | Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ 2020թ. 2-րդ եռամսյակ |
|---|---|---|---|---|---|---|
| 64. | Էնդոյի միջավայր | կգ | 4 | 30,000 | 120,000 | 4 |
| 66. | Սաբուրոյի միջավայր | կգ | 2 | 26,000 | 52,000 | 2 |
| 69. | SS ագար | կգ | 4 | 35,805 | 143,220 | 4 |
| 72. | Երկաթ-սուլֆիդային ագար | կգ | 1 | 48,900 | 48,900 | 1 |
| 74. | Մյուլլեր- Խինտոն ագար | կգ | 1 | 37,000 | 37,000 | 1 |
| 75. | XLD ագար | կգ | 1 | 35,000 | 35,000 | 1 |
| 76. | RVS բուլյոն | կգ | 1 | 49,900 | 49,900 | 1 |
| **Ընդամենը** | | | | | **486,020** | |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Ֆարմեգուս» ՍՊԸ
տնօրեն

/Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

AM 037336

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/7-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 64. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Էնդոյի միջավայր/ | 33691411/677 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 | 120,000 |
| 66. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Սաբուրոյի միջավայր/ | 33691411/679 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 | 52,000 |
| 69. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/SS ագար/ | 33691411/682 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 | 143,220 |
| 72. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Երկաթ-սուլֆիդային ագար/ | 33691411/684 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 | 48,900 |
| 74. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/Մյուլլեր- Խինտոն ագար/ | 33691411/685 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 | 37,000 |
| 75. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/XLD ագար/ | 33691411/686 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 | 35,000 |
| 76. | **Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) փոշի կամ գրանուլներ**/RVS բուլյոն/ | 33691411/687 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 | 49,900 |
| **Ընդամենը** | | | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** | **486,020** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարության
ՀՀ ՊՆ ՆՏԱ-ծխապահովման վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ֆարմեգուս» ՍՊԸ
տնօրեն

/ Գ. ԱՐՇԱԿՅԱՆ

AM 037336